



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



« 19 » 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 185 - 24

Նախաձեռնող՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր Ն. Ադոնցի փ., 21/3,

Գործունեությունը՝

Նոյակերպի ավազակոպճային խառնուրդի
հանքավայրի արդյունահանում
Արարաթի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 185 - 24

«19» սեպտեմբեր 2024թ.

Արարատի մարզի Նոյակերտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակը՝

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, Արարատ համայնք, Նոյակերտ բնակավայր

Ներածական մաս. Նոյակերտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է Արարատի մարզի, Արարատ համայնքի Նոյակերտ գյուղի վարչական տարածքում: Նոյակերտ և Արարատ բնակավայրերից համապատասխանաբար 3.9 կմ և 4.8 կմ հեռավորությունների վրա: Մոտակա բնակավայրերն են Եղեգնավան, Ավշար, Այգավան բնակավայրերը:

Հանքավայրի տարածքը հարում է Արաքս գետի ձախափնյա ողողահունի 805-806 մ բացարձակ բարձրություններին և զբաղեցնում է 68.76 հա տարածք:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային, այլ գործառնական նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:



Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հուլիսի 14-ի № 2205-Ա հրամանով:

Հաստատված պաշարները դիտարկվել են որպես շինարարական ավազի արտադրության հումք՝ ավազը հոսող ջրով լվանալուց հետո (ԳՕՍՍ 8736-2014) «Ավազ շինարարական աշխատանքների համար»: Խճի արտադրության հումք (ՀՍՍ ԳՕՍՍ 8267-95) «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար»:

Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել 2 բացահանքով համատեղ՝ I բացահանք՝ 2-C1 բլոկ և II բացահանք 1-C1 և 4-C1 բլոկներ:

Հանքավայրի (1-C1, 2-C1 և 4-C1 բլոկներ) օգտակար հանածոյի մարվող պաշարները 20 տարվա ընթացքում կազմում են 2400.0 հազ.մ³, այդ թվում ստատիկ մարվող պաշարները 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ՝ 695200 մ³ և 2-C1 բլոկից՝ 410900 մ³, իսկ դինամիկ պաշարները 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ կազմում են 1293900 մ³:

Հանքավայրի տարեկան մարվող պաշարները կազմում են 120000 մ³: 2-C1 բլոկից ստատիկ պաշարները կազմում են 20545 մ³, դինամիկ պաշարներ առկա չեն, իսկ 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ մարվելու է տարեկան 99455 մ³ (6,990096 տարվա ընթացքում մարվելու են ստատիկ պաշարները, որից հետո դինամիկ):

Հանքավայրը մշակումը նախատեսվում է իրականացնել բաց լեռնային աշխատանքների միջոցով: Ավազակոպճային խառնուրդի պաշարների վերականգնման գործակիցն ընդունված է 1 միավոր:

Հանքավայրի ծառայման ժամկետը կազմելու է 20 տարի:

Երկու բացահանքերը վերջնական դիրքում կունենան հետևյալ պարամետրերը.

I բացահանք

- ամենամեծ երկարությունը՝ 1267 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 290 մ,
- ամենամեծ խորությունը՝ 2.1 մ,
- օտարման տարածքը՝ 217489 մ²

II բացահանք

- ամենամեծ երկարությունը՝ 2736 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 321 մ,
- ամենամեծ խորությունը՝ 2.3 մ,
- օտարման տարածքը՝ 379191 մ²:

Երկու բացահանքերի համար հայցվող տարածքների կոորդինատները ARM WGS-84 համակարգով՝ I բացահանք (բլոկ 2-C1)

- | | |
|-------------------|-----------------|
| 1. Y=8469968.1643 | X=4407761.1784, |
| 2. Y=8470473.0000 | X=4407478.0000, |
| 3. Y=8470917.1645 | X=4406861.9632, |
| 4. Y=8470882.8635 | X=4406877.7269, |
| 5. Y=8470786.7682 | X=4406937.3807, |
| 6. Y=8470757.9098 | X=4406951.6496, |



7. Y=8470684.9376	X=4406981.9129,
8. Y=8470606.6287	X=4407017.2918,
9. Y=8470464.0867	X=4407071.8705,
10. Y=8470414.8632	X=4407087.6385,
11. Y=8470387.5086	X=4407102.4508,
12. Y=8470357.1745	X=4407126.6370,
13. Y=8470325.6936	X=4407162.1684,
14. Y=8470297.1605	X=4407202.6226,
15. Y=8470153.2331	X=4407423.2932,
16. Y=8470091.1625	X=4407532.5116,
17. Y=8470028.1142	X=4407669.0422

II բացահանք (1-C1 և 4-C1 բլոկներ)

1. Y=8469845.9098	X=4407669.4363,
2. Y=8469915.0000	X=4407791.0000,
3. Y=8469946.4328	X=4407773.3683,
4. Y=8470019.9598	X=4407663.2074,
5. Y=8470071.0451	X=4407550.3405,
6. Y=8470124.9622	X=4407450.7910,
7. Y=8470218.1553	X=4407304.9385,
8. Y=8470310.6269	X=4407165.6441,
9. Y=8470345.9611	X=4407123.5414,
10. Y=8470372.0664	X=4407101.1779,
11. Y=8470386.8746	X=4407090.8843,
12. Y=8470410.9704	X=4407078.4121,
13. Y=8470581.7262	X=4407016.0109,
14. Y=8470705.0004	X=4406962.2493,
15. Y=8470774.5062	X=4406932.4571,
16. Y=8470860.0168	X=4406878.9071,
17. Y=8470928.7960	X=4406845.8649,
18. Y=8470933.0000	X=4406840.0000,
19. Y=8471047.0000	X=4406773.0000,
20. Y=8471239.0000	X=4406749.0000,
21. Y=8471385.0000	X=4406782.0000,
22. Y=8471516.0000	X=4406791.0000,
23. Y=8471593.0000	X=4406767.0000,
24. Y=8471972.0000	X=4406556.0000,
25. Y=8472109.0000	X=4406496.0000,
26. Y=8472074.3971	X=4406416.3330,
27. Y=8472004.0060	X=4406480.7756,
28. Y=8471892.9414	X=4406560.2535,



29. Y=8471786.5868	X=4406636.1668,
30. Y=8471741.9937	X=4406659.8245,
31. Y=8471670.7600	X=4406675.4676,
32. Y=8471503.3089	X=4406681.9739,
33. Y=8471332.7424	X=4406669.8251,
34. Y=8471272.2882	X=4406647.6239,
35. Y=8471123.4141	X=4406551.8265,
36. Y=8470956.8457	X=4406524.0349,
37. Y=8470878.0092	X=4406537.8295,
38. Y=8470783.9098	X=4406587.6494,
39. Y=8470667.4072	X=4406618.4381,
40. Y=8470523.0602	X=4406708.4365,
41. Y=8470497.2856	X=4406704.0303,
42. Y=8470446.5008	X=4406742.9990,
43. Y=8470425.7572	X=4406780.5085,
44. Y=8470304.2108	X=4406900.9598,
45. Y=8470275.5408	X=4407059.3742,
46. Y=8470222.3346	X=4407150.3876, 10
47. Y=8470178.1519	X=4407273.2006,
48. Y=8470090.3673	X=4407450.6233,
49. Y=8470040.5145	X=4407531.2814,
50. Y=8470009.0265	X=4407569.4082,
51. Y=8469934.0000	X=4407636.2837

Ավագակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները կատարվելու են դեպի ներքև շերտի ման եղանակով, հակառակ բահով սարքավորված էքսկավատորով:

Հանքավայրի բացումը կատարվելու է բացահանքի հարավ արևելյան մասերից՝ ամենացածր նիշերից ընդլայնական կտրող խրամների անցումով: Կտրող խրամի երկարությունը I բացահանքում կազմում է 30 մ, լայնությունը հիմքի մասում միջինը 8.0 մ, միջին խորությունը 1.73 մ:

Կտրող խրամի երկարությունը II բացահանքում կազմում է 80 մ, լայնությունը հիմքի մասում միջինը 8.0 մ, միջին խորությունը 1.67 մ:

Յուրաքանչյուր տարի՝ սեզոնի, սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները.

-օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով նախատեսվում է տեղադրել ՈԵՋ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկներ:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ԱԿԽ արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները.

-մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում (կատարվող հողային աշխատանքները՝ 1250 մ³),



-դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ արևելյան մասից II բացահանքում 110 մ երկարությամբ և 5% թեքությամբ – 1070 մ³,

-բացահանքի մակերևույթով ավտոհինքնաթափի շարժման ուղեծրով, ինչպես նաև արդյունահանվող ընթացաշերտին զուգահեռ, էքսկավատորի շարժման ուղեծրով – ՈՋԵ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնյա սալիկների տեղադրում (25 մ երկարությամբ, 15 մ լայնությամբ):

-Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել դեպի ներքև շերտի ման եղանակով, 2.15 մ³ շերտի տարողությամբ հակառակ բահով սարքավորված – CAT 336-07GC էքսկավատորով: Նախ կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Շահագործման ընթացքում II բացահանքի և I բացահանքի մակաբացման ապարները 83220 մ³ ընդհանուր ծավալով աստիճանաբար տեղափոխվելու են I բացահանքի բացված հատակի վրա 0.38 մ բարձրությամբ ներքին լցակույտ:

Խմելու ջուրն արդյունաբերական հրապարակ է բերվելու է ԱԵ-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը՝ ջրցան ավտոմեքենայով:

Բացահանքում արդյունահանման աշխատանքների ավարտելուց հետո նախատեսվում է իրականացնել լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա: Հարթեցումը կատարվելու է նաև բացահանքին մոտեցնող ավտոճանապարհների 6300 մ², արդյունաբերական հրապարակների 200 մ² և աշխատանքային հրապարակների խախտված 2800 մ² մակերեսով տարածքներում: Հարթեցումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 3671.35 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ Նոյակերտի ԱԿԽ հանքավայրի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան, պատմության և մշակութային հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-նավթամթերքների, դրանց մնացորդների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),

-թափոնների անձնագրերի կազմում և ներկայացում շրջակա միջավայրի նախարարություն,

-բանեցված յուղերի գտում և կրկնակի օգտագործում,

-կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,

-լեռնատրանսպորտային միջոցների վրա չեզոքացուցիչ սարքերի տեղադրում՝ արտանետումներն կրճատելու նպատակով,

-փոշենստեցման նպատակով հանքավայրին մոտեցող ճանապարհի ջրում, տարվա չոր և շոգ եղանակներին,

-մոտեցնող ճանապարհների խճապատում, փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,



-Արաքս գետի ափամերձ հատվածում, 20 մ լայնությամբ ափապաշտպան շերտի սահմաններում թփուտների հատման բացառում,

-կեղտաջրերի հավաքում բետոնապատ անթափանց հորում, որը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով:

-բացահանքերի շահագործման ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում,

- նախատեսվում է իրականացնել արտադրական տարածքի կանաչապատում, որի ընթացքում օգտագործվելու է ջրահեռացման առվի հատակում կուտակված և ավազի լվացումից առաջացած օրգանական հումքով հարուստ տիղմը:

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

2. աղմուկի մակարդակի վերահսկողություն, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հանքավայրի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

4. առանձին կուտակված աղուտ-ալկալի հողերում հումուսի պարունակության մշտադիտարկում,

5. ջրահեռացման առվի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ,

6. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխություն,

7. գետի հունի փոփոխությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս կատարվելու է գետի հունի տոպոհանույթ:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան մասնահանել 1805.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Արարատի մարզի Արարատ համայնքի Նոյակերտ բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կանխելով



գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

-Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն, Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին 2010 թվականի N 72-Ն, 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն, Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին որոշումների պահանջներով և ըստ անհրաժեշտության նախատեսել պահպանության միջոցառումներ:

2. Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

3. Արդյունահանման աշխատանքների ընթացքում բացառել Արաքս գետի ողողահունում կամ ափամերձ հատվածում ցանկացած տեսակի աշխատանքների իրականացումը (Հայաստանի Հանրապետության պետական սահման):

4. Արաքս գետի ափամերձ հատվածում, 20 մ լայնությամբ ափապաշտպան շերտի սահմաններում թեուտների հատման բացառում

- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ներկայացված ռեկուլտիվացիան բացահանքի շահագործման ավարտից հետո:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵՃՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Նոյակերտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա



ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն
վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Հովիկ Մեսրոպյան

